ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ
Միջազգային գիտական պարբերական
ISSN 2579-2822
Կայքէջ՝ anau.am/hy/teghekagir

ՀՏԴ 338.43:338.1(479.25)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ (ՄԹԵՐՄԱՆ) ԱՐԺԵՇՂԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈԴԵԼ

**Ա.Ե. Ոսկանյան**
*Հայաստանի ազգային ագրարային համալսարան*
ashot.voskan@gmail.com

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

**Բանալի բառեր՝**
*իրացում, արժեշղթա, գնումներ, մեծածախ շուկա, հավաքման կետեր*

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կազմակերպչական ենթակառուցվածքների ձևավորումը և զարգացումը դիտարկվում է որպես Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի գնման և իրացման արդյունավետության բարձրացման միջոց:

Ուսումնասիրվել են գործող սխեմաները, բացահայտվել դրանց բացասական հետևանքները: Առաջարկվում է Հայաստանում ներդնել գյուղմթերքի գնման և իրացման հստակ ու կանոնակարգված մոդելներ, մասնավորապես՝ գյուղատնտեսական մեծածախ շուկաների ձևավորում և դրանց օրենսդրական բազայի ապահովում՝ հաշվի առնելով գյուղացիական տնտեսությունների և սպառողների շահերը:

«Երևանի մեծածախ շուկա» ծրագիրը կարող է իրականացվել 2020-2022 թթ.: Այն կներառի մեկ մեծածախ շուկա՝ մոտ 7-8 ընդունման կետերով: Ներդրումների վերադարձը կարելի է ակնկալել 12-15 տարի հետո:

### Նախաբան

Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի իրացման արդյունավետ կազմակերպումը կարևորագույն խնդիր է: Լիարժեք և համակարգված չէ գյուղատնտեսական արտադրանքի գնման, վերամշակման և իրացման գործընթացում ներառված ենթակառուցվածքների ու օղակների աշխատանքը: Գյուղատնտեսական արտադրանքի իրացման արժեշղթայում ձևավորվել են միջնորդներ, ստվերային «մեծածախ շուկաներ», որոնք, օգտվելով գյուղացիական տնտեսությունների մասնատվածությունից, ոչ կազմակերպվածությունից և տեղեկացվածությունից, արտադրված բերքի իրացման այլընտրանքային ուղիների բացակայությունից և անելանելի վիճակից, մթերքը գնում են նվազագույն գներով և վերավաճառում այլ միջնորդների՝ պարտադրելով բարձր գներ:

ՀՀ պարենային շուկայում առկա են գնագոյացման ձևախեղման և գների անհիմն բարձրացման երևույթներ: Գյուղատնտեսական մթերքի իրացման գործընթացում ձևավորված եկամուտների չնչին մասն է (շուրջ 30 %) բաժին ընկնում արժեք ստեղծող արտադրողին: Որոշ ապրանքատեսակների (բանջարեղենային և բոստանային) առումով մանրածախ գներն արտադրության գներից բարձր են լինում 2-3 և նույնիսկ ավելի անգամ:

### Նյութը և մեթոդները

Պտղի և բանջարեղենի արժեշղթաների հաշվարկն ու վերլուծությունն իրականացվել է ըստ ՀՀ վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ մաքսային ծառայության տվյալների: Կիրառվել են հետազոտության ինչպես ընդհանուր,

այնպես էլ հատուկ մասնագիտական մեթոդներ, մասնավորապես՝ մոնոգրաֆիկ, հաշվային-վիճակագրական, համեմատական, տեսական ընդհանրացման և այլն: Ուսումնասիրվել են Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի գնումների կազմակերպման սխեմաները և ի հայտ եկող բացասական հետևանքները: Գնահատումները և հաշվարկները կատարվել են նաև ըստ 1995 թ. «Գյուղատնտեսական մեծածախ շուկաների համակարգի ստեղծում» ծրագրի շրջանակում ՀՀ ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև Լոնդոնում կնքված վարկային պայմանագրի, միջազգային փորձի ու ՀԱԱՀ Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի գիտական հաշվետվությունների:

## Արդյունքները և վերլուծությունը

Հարկ է նշել, որ Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը (հացահատիկի մոտ 40 %, պտղի, կարտոֆիլի, բանջարեղենի 20-25 %, կաթի և կաթնամթերքի 40 %) օգտագործվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ որոշ մասն իրացվում է ապրանքափոխանակության սկզբունքով, ինչը խոչընդոտում է տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի արժեշղթայում կարևորվում է հատկապես վերամշակման ոլորտը, որտեղ գրեթե բոլոր ձեռնարկություններն աշխատում են արտադրական ցածր հզորությամբ, այսպես՝ պտուղ-բանջարեղենի վերամշակումը կազմում է 25-30 %, խաղողի վերամշակումը՝ 65-70 % և այլն:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության պայմաններում թեև ակտիվացել է գյուղատնտեսական թարմ արտադրանքի արտահանումը, այնուամենայնիվ այն կազմում է արտահանման ծավալային ներուժի ընդամենը 5-7 %-ը:

Մեր գնահատմամբ գյուղատնտեսական արտադրանքի իրացման ոլորտում ստեղծված իրավիճակը չկանոնակարգված իրացման ուղիների կիրառման, պայմանագրային հարաբերությունների դանդաղ արմատավորման և, ընդհանրապես, գյուղատնտեսական մթերքի, դրա վերամշակումից ստացված արտադրանքի իրացման գործընթացի անկատարության, պետական կարգավորման ու աջակցության գործուն կառուցակարգերի, մեծածախ շուկաների համակարգի բացակայության, վերամշակող ընկերությունների արտադրական հզորությունների թերի օգտագործման և այլ գործոնների հետևանք է:

Հաշվի առնելով հանրապետության սոցիալ-տնտեսական պայմանները, գյուղատնտեսության գոտիական մասնագիտացման առանձնահատկությունները և այլ հանգամանքներ՝ փորձել ենք ներկայացնել հատկապես թարմ պտուղ-բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի, կարտոֆիլի և հատիկաընդեղենի իրացման գործընթացի բարելավման օպտիմալ ու արդյունավետ մոդել, որի առանցքը մեծածախ շուկաների համակարգի ձևավորումը և իրավաօրենսդրական պայմանների ապահովումն է:

Հայաստանում ներկայումս գործում են մի շարք մանրամեծածախ շուկաներ, որոնք իրականացնում են մեծածախ առևտուր, ապահովում են արտադրող-միջնորդ կապը, սակայն դասական առումով չեն համապատասխանում մեծածախ շուկաներին ներկայացվող պահանջներին:

**Աղյուսակ.** Հայաստանում պտուղ-բանջարեղենի, խաղողի, կարտոֆիլի արտադրության, իրացման ծավալները և ուղղությունները 2016-2017 թթ.*

| Տարիներ | Գյուղ. արտադրանք | Արտադրության ծավալը, հազ. տ | Իրացում, այդ թվում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | արդյունաբերական վերամշակում | | թարմ իրացում, տնային վերամշ. և երկար. պահպանում | | արտահանում | |
| | | | հազ. տ | % | հազ. տ | % | հազ. տ | % |
| 2016 թ. | Բանջարեղեն | 881,5 | 40,3 | 4,6 | 792,5 | 89,9 | 48,7 | 5,5 |
| | այդ թվում՝ լոլիկ | 290,9 | 26,6 | 9,1 | 227,2 | 78,1 | 37,1 | 12,8 |
| | Պտուղ | 242,6 | 20,9 | 8,6 | 168,7 | 69,5 | 53 | 21,8 |
| | Խաղող | 178,8 | 109,8 | 61,4 | 26,3 | 14,7 | 42,7 | 23,9 |
| | Կարտոֆիլ | 604,9 | - | - | 603,3 | 99,7 | 1,6 | 0,3 |
| 2017 թ. | Բանջարեղեն | 861 | 237,3 | 27,7 | 600,1 | 69,7 | 52,8 | 6,1 |
| | այդ թվում՝ լոլիկ | 298,1 | 82,6 | 27,7 | 207,7 | 69,7 | 30,1 | 10,1 |
| | Պտուղ | 361,6 | 139 | 38,5 | 199,9 | 55,3 | 87,2 | 24,1 |
| | Խաղող | 210 | 145,6 | 70 | 58,6 | 28,2 | 20,7 | 9,8 |
| | Կարտոֆիլ | 547,4 | - | - | 518,4 | 94,7 | 21,7 | 3,9 |

* www.armstat.am

Գյուղատնտեսությունում հիմնականում մեծ թիվ են կազմում քիչ քանակությամբ արտադրանք ապահովող տնտեսությունները, ուստի, որպես իրացման արդյունավետ կազմակերպական մոդել, մեծածախ շուկաների համակարգի ներդրումը և գործարկումը կնպաստեն գյուղատնտեսական ապրանքատեսակների գնման ու իրացման օպտիմալ պայմանների, ինչպես նաև իրական գների ձևավորմանը, արտադրող-միջնորդ-մեծածախ շուկա-մանրածախ շուկա-սպառող արդյունավետ գործող շղթայի կայացմանը: Կառուցվածքում կարող են ընդգրկվել միջմարզային կամ տարածաշրջանային, առանձին ապրանքատեսակների մի քանի մեծածախ շուկաներ:

Առաջարկում ենք Երևանի գյուղատնտեսական մեծածախ շուկայի ծրագրի իրականացում (2020-2022 թթ.): Ըստ ապրանքային շրջանառության ծավալի՝ այն կարող է լինել միջին մեծության, սպառողական բնույթի, որի գործունեության հիմնական նպատակը մեծածախ առևտրով զբաղվողների մասնակցությամբ սպառողների համար արդարացի գների սահմանումն է (մեծածախ շուկան կարող է նաև ունենալ արտադրողների (ֆերմերների) համար արդարացի գների սահմանման ուղղվածություն):

Ենթադրվում է, որ գործարկման 3-րդ տարվա ընթացքում մեծածախ շուկայում կիրացվի Երևան քաղաքում իրացվող թարմ մթերքի շուրջ 50 %-ը՝ 40-45 հազ. տ կարտոֆիլ, 100 հազ. տ բանջարեղեն, 25-30 հազ. տ բոստանային մշակաբույսեր, 55-60 հազ. տ պտուղ և 2-3 հազ. տ խաղող:

Նախատեսվում է արտահանել ավելի քան 80 հազ. տ կարտոֆիլ, 100 հազ. տ բանջարեղեն, 70 հազ. տ պտուղ, 35 հազ. տ խաղող, 7 հազ. տ բոստանային մշակաբույսեր և այլն:

Մեծածախ շուկայի ծրագրի արժեքը կարող է կազմել 25-27 մլն ԱՄՆ դոլար, ակնկալվում է Երևանի քաղաքապետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունը հողահատկացման և այլ հարցերում:

Հատկանշական է, որ մեծածախ շուկայի ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ աջակցությունը պետք է ցուցաբերվի հետևյալ կարգով.

- հատկացումներ հողատարածքի կամ շինության տեսքով,
- միջազգային կազմակերպություններից վարկերի և դրամաշնորհների ստացում, ծրագրի իրականացմանն առանձին երկրների մասնակցության ապահովում,
- մեծածախ շուկայի շինարարության տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության փաստաթղթերի նախապատրաստման ֆինանսավորում և այլն:

Բնականաբար ՀՀ կառավարությունն ու Երևանի քաղաքապետարանը իրավասու են առաջադրել մեծածախ շուկայի գործունեության որոշակի սահմանափակումներ և պարտավոր են ապահովել բարենպաստ առևտրային պայմաններ:

Հայաստանում կարելի է ներդնել գյուղատնտեսական արտադրանքի իրացման ենթակառուցվածքային ապահովման այնպիսի մոդել, որի համաձայն՝ կարևորվում է պետության դերակատարությունը: ՀՀ պետական կառավարման լիազորված մարմինը ստեղծում է «Երևանի գյուղատնտեսական մեծածախ շուկա» ԲԲԸ, որի կանոնադրական կապիտալում ՀՀ կառավարության մասնաբաժինը 26 % է, Երևանի քաղաքապետարանինը՝ 25 %, «Մեծածախ շուկա» ընկերությանը՝ 20 %, իսկ մնացած մասնաբաժինը բաշխվում է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի, մասնագիտացված կազմակերպությունների (այդ թվում՝ ԵԱՏՄ երկրների) ու մասնավոր բաժնետերերի միջև:

Մեծածախ շուկայի ծրագիր իրականացնելու համար բյուջետային միջոցները, վարկերը, դրամաշնորհները և այլ ֆինանսական հատկացումները (ցանկացած աղբյուրից) տնօրինում և աշխատանքների նկատմամբ վերահսկողություն է իրականացնում բաժնետիրական ընկերության խորհուրդը:

«Երևանի գյուղատնտեսական մեծածախ շուկա» ԲԲԸ-ի աշխատակազմը պետք է տնօրինի և ապահովի Երևանի կենտրոնական մեծածախ շուկայի աշխատանքը: Մոտ 8 հա տարածքի վրա պետք է տեղակայված լինի 7-8 հավաքման կետ (պայմանականորեն Շիրակի, Գեղարքունիկի, Լոռու, Արմավիրի, Արարատի, Տավուշի, Սյունիքի մարզերում և Արցախում):

Գյուղատնտեսական արտադրանքի գնման, իրացման այս մոդելի ներդրման դեպքում նախատեսվում է նաև նպատակային վարկերի տրամադրում մեծածախ շուկայի հետ համագործակցող ֆերմերներին, միջնորդ առևտրականներին, մանրածախ առևտրով զբաղվողներին և այլ շահառուների:

Հավաքման կետերը, ըստ մասնագիտացվածության, պետք է լինեն երեք տիպի՝ պտուղ-բանջարեղենի, կարտոֆիլի և խառը: Նշված ենթակառուցվածքը հնարավորություն կտա գյուղացիներին քիչ քանակությամբ ապրանք հանձնել մեծածախ վաճառք իրականացնողներին, սպառողական կոոպերատիվներին և առևտրականներին, որոնք էլ մեծ քանակությամբ ապրանքը Երևանում իրացնելու կամ արտահանելու նպատակով կտեղափոխեն մեծածախ շուկա: Հավաքման կետերը պետք է ունենան բեռնման և բեռնաթափման, տեսակավորման և պահեստային տարածքներ, ինչպես նաև մեքենասարքավորումներ:

Երևանի մեծածախ շուկայի վաճառողները հնարավորություն կունենան վաճառել ապրանքը մրցակցային հիմունքներով՝ համապատասխան գնի և որակի

տարբերակմամբ, արժեշղթայի բոլոր մասնակիցների համար օպտիմալ շահութաբերություն ապահովելու սկզբունքով:

Արտադրված գյուղատնտեսական արտադրանքի առավել կենտրոնացված գնումների, տեղափոխումների և մատակարարումների կազմակերպումը կնվազեցնի ապրանքատեսակների գնագոյացման ծախսերի տեսակարար կշիռը:

Մեծածախ շուկաների մոդելի ներդրմամբ կիսով չափ կկրճատվեն պտուղ-բանջարեղենի, կարտոֆիլի և մյուս ապրանքատեսակների արտադրության, պահպանման, փաթեթավորման, տեղափոխման ընթացքում առաջացող մոտ 30-35 % կորուստները՝

- մուլտիպլիկատիվ էֆեկտի ազդեցություն կզգան նաև Երևան քաղաքում գործող սուպերմարկետների հետ անհավասար մրցակցության մեջ գտնվող փոքրածավալ մանրածախ առևտրային կետերը,

- անցում կկատարվի գյուղատնտեսական ապրանքատեսակների քաղաքակիրթ իրացման և առևտրի կազմակերպման, պարենի անվտանգության կանոնների պահպանման, հստակ հաշվառումների անցկացման, ագրարային օրենսդրության կատարելագործման:

**Եզրակացություն**

Միջազգային փորձը, Հայաստանում մեծածախ շուկաների նախկին նախագծի վերլուծությունը և մեր ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ առաջարկվող մոդելի ներդրման նպատակով ծրագրի իրականացման համար Համաշխարհային բանկից կամ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից ու հիմնադրամներից վարկ կամ փոխատվություն վերցնելիս տոկոսադրույքը 3 %, վճարման ժամկետը 15 տարի, շուկայի կառուցման ժամկետը 2 տարի, շահութաբերության մակարդակը 15 % ընդունելու դեպքում, եթե անգամ գործունեության թերբեռնված ժամանակահատված են համարվում շահագործման առաջին 3 տարիները, տարեկան կտրվածքով կակնկալվի 500-700 հազ. ԱՄՆ դոլար շահույթ: Չորրորդ տարվանից սկսած՝ մեծածախ շուկայի կողմից մատուցված ծառայությունների, Երևան քաղաքում և դրա շրջակա տարածքներում ապրանքատեսակների իրացման ու արտահանման ծավալների ընդլայնմանը զուգընթաց սպասվում է շահույթի աստիճանական աճ (2,5 մլն ԱՄՆ դոլար և ավելի): Այս պարագայում կապիտալ ներդրումների վերադարձ կարելի է ակնկալել մոտ 12-15 տարի հետո*:

Կիրառվելու են քաղաքակիրթ առևտրային կանոնակարգումներ, խիստ վերահսկողության կանոններ, սահմանափակումներ ու կառուցակարգեր: Հարկ է լինելու ընդունել «Գյուղատնտեսական արտադրանքի մեծածախ շուկաների մասին» օրենք և բազմաթիվ նորմատիվային ակտեր:

Հայաստանում պտղի, խաղողի, բանջարեղենի, կարտոֆիլի, բոստանային մշակաբույսերի և մի շարք այլ ապրանքատեսակների գնումների ու իրացման արժեշղթայի մեծածախ շուկաների միջոցով կազմակերպման մոդելի կիրառման և ամբողջականացման նպատակով անհրաժեշտ է ձևավորել տարածաշրջանային բնույթի համեմատաբար փոքր մեծածախ շուկաներ՝ Գյումրի, Վանաձոր և Ստեփանակերտ քաղաքների շրջակա տարածքներում, կիրառելով վերը նշված հավաքման կետերի հնարավորությունները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ձևավորել որոշակի կառուցվածքով, համահավասար մրցակցային պայմաններով ու միասնական կանոնակարգերով գործող մեծածախ շուկաների համակարգ (ցանց):

**Գրականություն**

1. Ազգային վիճակագրական ծառայության նյութեր: ՀՀ ԱՎԾ կայք. www.armstat.am (դիտվել է՝ 12.12.2018 թ.):

2. Панкратов Ф.Г. Коммерческая деятельность: Учебник: - 7-е изд., перераб. и доп. - М.: Дашков и К, 2004. - 504 с.

3. www.nejdana.in.ua: Оптовый сельскохозяйственный рынок “Нежданный” (դիտվել է՝ 02.04.2019 թ.):

* *Ներկայացված ցուցանիշները մոտավոր գնահատականներ են: Հաշվարկված չեն մինչև վարկի մարումը բաժնետերերի շահաբաժին ստանալը, ինչպես նաև ընկերության գործունեության առաջին 4-5 տարիներին հարկատեսակներից ազատվելու հնարավորությունները:*

## АННОТАЦИЯ

**Модель организации закупок (цепочки создания стоимости) сельскохозяйственной продукции в Республике Армения**

Формирование и развитие организационных инфраструктур рассматривается как основной путь повышения эффективности процесса закупок и реализации селькохозяйственной продукции в Армении. Изучены действующие схемы, выявлены их негативные последствия. Предлагается внедрить в Армении четко определенные и регулируемые модели закупки и реализации сельхозпродукции. Тем самым, рассматривается формирование системы сельскохозяйственных оптовых рынков и обеспечение их законодательной базы с учетом интересов фермеров и потребителей. В 2020–2022 гг. возможна реализация проекта «Ереванский оптовый рынок», который включит в себя Центральный оптовый рынок и 7-8 приёмных пунктов. Окупаемость инвестиций можно ожидать через 12-15 лет.

## ABSTRACT

**Purchase Model of Agricultural Products (Value Chain) in the Republic of Armenia**

Formation and development of organizational infrastructure is considered as a way of increasing the sales performance of agricultural products in Armenia. The scheme of organizing purchase of goods has been studied. It is proposed to introduce well-defined and regulated models for the purchase and sale of agricultural products in Armenia. Thus, formation of a system of agricultural wholesale markets and provision of their legislative base are considered, where the interests of farms and consumers are taken into account. “Yerevan wholesale market” program can be implemented in 2020-2022, with a wholesale market and about 7-8 receiving points. Return on investment can be expected in 12-15 years.


*Ընդունվել է՝ 05.03.2019 թ.*
*Գրախոսվել է՝ 14.05.2019 թ.*